



# ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀՊՄՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

30 ԱՊՐԻԼԻ  
2026 թ.  
№ 7 (1162)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
երկշաբաթաբերթ • հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐԹՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԸՍՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցն է. ապրիլի 24-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, համալսարանական դպրոցների սովորողները մասնակցեցին

ոգեկոչման ամենամյա երթին և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղիկներ խոնարհեցին՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:



Գևորգ Էսին

## «Հավերժի ճամփորդը»

«Ես նա եմ, ով միշտ մահվան մեջ է ապրել, բայց մահ չունի...»

...Որտեղ ասես, որ չեմ եղել ես և որտեղից ասես, որ չեմ գալիս... Արտաշատից մինչև Տիգրանակերտ և Վաղարշապատից մինչև Դվին ու Անի ես դար ու դարեր ազատամարտ եմ մղել հռոմեացու և պարսիկի, բյուզանդացու և արաբի, սելջուկի ու մոնղոլի, թաթարի ու թուրքի դեմ, հանուն իմ՝ մի թիզ դարձած հողի ու մի բուռ մնացած ժողովրդի գոյության...

Անի մայր քաղաքից եմ ես գալիս, — գերված ու ավեր Անիից, որը հարություն է առնում Նոր

Երևանի կրթողների մեջ:

Կապույտ ծովի ալիքներով ողողված չքնաղ Կիլիկիայից եմ ես գալիս, որտեղ մի օր, ավանդ, դաճաղ դրին իմ անկախության վերջին հույսը...

Սյունիքի բարձր ու անառիկ լեռներից եմ ես գալիս, որտեղ, ահեղ հողմերի խաչմերուկում, անմար եմ պահել իմ պետականության կանթեղը...

Պարսից հարկահաններից փրկված գյուղերից ու քաղաքներից եմ գալիս և Սուլթանի լծի տակ հեծող գյուղերից ու քաղաքներից, որտեղ ամեն Զեյթուն՝ պայթյուն էր և ամեն Սասուն՝ ցասում...

Տեր Զորից եմ ես գալիս, Մեսքենեից ու

Ռես-Ռիլ-Այնից, որտեղ խոշտանգեցին ինձ, բայց ես չմեռա, ջարդեցին մեջքս, բայց ես նորից շտկվեցի, սպանեցին ինձ, բայց ես վերստին հարություն առա...

Մուշից եմ գալիս և Շատախից, Անդոկ սարից ու Վանա այգեստանից, Ուրֆայից ու Շապին Գարահիսարից, Հաճրնից ու Մուսա լեռան կատարից, որտեղ զենքը ձեռքիս պաշտպանել եմ իմ տան պատիվը, իսկ ապա, ավանդ, ցուպը ձեռքիս ցրվել աշխարհով մեկ...

Հավերժի ճամփորդն եմ ես, որը, դարերի խորքից եկած, դեպի դարերն է գնում և որի երթը վերջ ու վախճան չունի, քանի դեռ գեթ մի հայ է ապրում այս հողագնդում, այս հավերժական արևի ներքո...»:



«Ակադեմիական քաղաք» ծրագրի Կրթական կլաստերի ձևավորման շրջանակում University College London-ի (UCL) փորձագետները կրկին Մանկավարժականում էին: Այցի նպատակն էր քննարկել բուհում կրթության որակի ապահովումն ու իրականացումը, ուսումնասիրել որակի քաղաքականությունը, կրթական ծրագրերի մշտադիտարկումը, բարելավման մեխանիզմները, ուսանողների ներգրավվածությունը գործընթացներում:

UCL թիմի անդամներ Հելեն Մեթյուզն ու Զակ Լիդելը հանդիպումներ ունեցան բուհի ղեկավար կազմի, կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի աշխատակիցների, դասախոսների և ուսանողական համայնքի ներկայացուցիչների հետ:

Փորձագետների հետ հանդիպմանը ՀՊՄՀ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը խոսեց մեր երկրի կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների և բարեփոխումների մասին՝ ընդգծելով Մանկավարժականի կարևոր դերակատարումը դրանցում, ինչպես մանկավարժներ պատրաստող, այնպես էլ գործընթացում իր առաջարկներն ու դիտարկումները ներկայացնող կարևոր կառույցի:

Լիլիթ Մկրտչյանը միջազգային փորձագետներին ներկայացրեց նաև բուհի ռազմավարական զարգացման ուղղությունները, որակի գործընթացները, կարևորեց համապատաս-

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՄԻՏՎԱԾ ԷՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

խան կառույցի գործունեությունը, դպրոց-բուհ կապի շարունակականության, գործողություններն առավել չափելի դարձնելու և պլանավորելուն միտված աշխատանքները: Ինչպես նշեց բուհի ղեկավարի պաշտոնակատարը՝ ըստ նոր ռազմավարության՝ բուհը կլինի ոչ միայն ուսանողակենտրոն, այլև դասախոսակենտրոն: Կարևորվելու են ոչ միայն ուսումնառողների, այլև բուհի աշխատակազմի որակի ապահովումը:

Ընդգծեց՝ աշխատում են մի քանի ուղղություններով՝ մշակում են հայեցակարգ, վեր են հանում կարիքները, նախատեսում են նաև վերապատրաստումներ: Հանդիպմանն անդրադարձան նաև ուսանողների գնահատման, գիտելիքների ստուգման համակարգին, մշակված մեխանիզմներին, պարբերաբար կազմակերպվող մշտադիտարկումներին, որոնք առավել արդյունավետ և թափանցիկ են դարձնում ուսանողների հետ կապը, հնարավորություն տալիս կատարել համապատասխան կարիքների գնահատում, փաստաթղթավորել դրանք, տալ լուծումներ:



Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի աշխատակազմի հետ հանդիպմանը կառույցի ղեկավար Անի Հակոբյանը միջազգային փորձագետներին ներկայացրեց բուհի որակի ներքին ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը, իրականացված աշխատանքները, գործ-

ընթացի արդյունավետությանը միտված մեխանիզմները:

Անդրադարձավ նաև կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և բարելավման գործընթացին, որպես շահառու և գործընկեր կարևորեց դրանցում ուսանողների դերակատարումը, նրանցից ստացած հետադարձ կապը՝ ինչպես աշխատաձևավալի, այնպես էլ՝ մեթոդական առումով, նաև այն, թե ինչպես են նրանք պատկերացնում իրենց հետագա մասնագիտական գործունեությունը և դրանում բուհի դերակատարումը:

UCL ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան նաև բուհի մի շարք ֆակուլտետների և ամբիոնների ներկայացուցիչների հետ: Քննարկման առանցքում կրթական ծրագրերի կառուցվածքն էր, մասնավորապես՝ «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» «Մաթեմատիկա» առարկաների ուսուցման մեթոդները, նկարագրերը, դրանց բովանդակության փոփոխությունները, ընտրովի դասընթացները, մասնագետներ պատրաստելու առանձնահատկությունները:



Բուհի ուսանողների հետ հանդիպմանը միջազգային փորձագետները հնարավորություն ունեցան ծանոթանալու նրանց դիտարկումներին՝ կրթության որակի, համալսարանական միջավայրի առանձնահատկությունների վերաբերյալ:

Մարին Աղեկյան

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 10 ՏԱՐԻ



Այս տարի լրանում է Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի 10-ամյակը: Ամբիոնի հիմնադրման գործում իր ծանրակշիռ ավանդն ունի էս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը:

Փոխադարձ այցելություններն ու դասախոսություններով հանդես գալը այս համագործակցության առաջնահերթություններից է:

Ապրիլի 20-23-ը Erasmus+ ծրագրի շրջանակներում Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում: Դասախոսություններով հանդես է եկել Սաչատուր Ստեփանյանը:

Ապրիլի 27-ին Մանկավարժական համալսարանում էր Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պատվիրակությունը՝ Պատմության ինստիտուտի ղոցենտ, դոկտոր Անդրաշ Բաչկայը, աշխատակից Քրիստիան Սարոն և բուհի Միջազգային բաժնի Էրազմոս+ ծրագրի համակարգող Ագնեշ Ռեկիկ-Քալոզը:

10-ամյա համագործակցությունը հունգար գործընկերների հետ օրեցօր ընդլայնվում է, ձեռք բերում նոր ընդգրկումներ գիտության ու կրթության բնագավառում:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի և Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում քննարկեցին 10-ամյա

գործընկերությունը, ինչպես նաև կանխորոշեցին առաջիկա անելիքները: Ակտիվ պոսակցություն ծավալվեց գործընկերության, դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերի, դիպլոմների համադրվածության ու իրականացվելիք նախագծերի շուրջ:

Ֆակուլտետի ղեկան Էդգար Հովհաննիսյանը կարևորեց գործընկերության 10-

ամյա ձեռքբերումները՝ այդ համատեքստում ընդգծելով Քրիստիան Սարոյի ուսումնառությունը Մանկավարժականում, իսկ այժմ՝ մասնագիտական գործունեությունը Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում:

Հանդիպումն ավարտվեց դոցենտ Անդրաշ Բաչկայի դասախոսությամբ՝ «Զար ոգիները հին Միջագետքում» թեմայով:



## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԴԱՐՁԱՎ ԻԿՕՄ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՆԴԱՄ

ԻԿՕՄ-ը (թանգարանների միջազգային խորհուրդ) թանգարանային ամենամեծ համայնքն է աշխարհում, մասնագիտական հարթակ, որտեղ միավորվում են և՛ թանգարանների աշխատողները, և՛ կազմակերպությունները: ԻԿՕՄ հայկական թանգարանների ազգային կոմիտեի նախագահ Հայկ Մկրտչյանը, որը Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության



ամբիոնի շրջանավարտ է, այս անգամ որոշել էր ԻԿՕՄ-ի նոր անդամների անդամատոմսերի հանձնման շնորհանդեսը կազմակերպել հարազատ բուհում:

Ի դեպ, այս տարի Մանկավարժական համալսարանը՝ ի դեմս բուհի պատմության թանգարանի, դարձավ այդ

կազմակերպության ինստիտուցիոնալ անդամ: Հայկ Մկրտչյանը կարևորում է ԻԿՕՄ-ին ՀՊՄՀ պատմության թանգարանի անդամակցությունը և հերթական շնորհանդեսի կազմակերպումը հանրապետությունում թանգարանային մասնագետներ պատրաստող համալսարանում:

ՀՊՄՀ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ողջունեց ներկաներին՝ շնորհանդեսը Մանկավարժականում անցկացնելու առթիվ և ընդգծեց, որ համալսարանը պետք է լինի այն հենքն ու միջավայրը, որտեղ պետք է համախմբվեն ոլորտի մասնագետները, արարեն գաղափարներ և այդ գաղափարները կյանքի կոչեն: Ռեկտորի պաշտոնակատարը կարևորեց թանգարանների համաշխարհային կազմակերպությանը Մանկավարժական համալսարանի անդամակցելու փաստը, որովհետև այն «ճանաչողության, իմացության շատ կանոն հնարավորություններ է ընձեռում»:

Լիլիթ Մկրտչյանը տեղեկացրեց, որ պատրաստվում են ՀՊՄՀ շրջանավարտների միավորում ստեղծել և հույս հայտնեց՝ յուրաքանչյուր շրջանավարտ բուհի զարգացման ռազմավարության մշակմանն իր նպաստը կարող է բերել:

ԻԿՕՄ Հայաստանը հիմնադրվել է 2009 թվականին՝ ակտիվ գործունեություն իրականացնելով՝ բազմաթիվ մասնագիտական միջոցառումներ, գիտաժողովներ, կրթական ծրագրեր: Յուրաքանչյուր անդամակցություն թանգարանային այս հարթակի հետ ակտիվ 2 փուլների հնարավորություն է ստանում՝ ըստ հետաքրքրությունների՝

թանգարանային մարկետինգ, կրթական ծրագրեր, թանգարանային կառավարում և այլն: Կ ա զ մ ա կ եր պ ու թ յ ա ն ն անդամակցողներն ըստ իրենց հետաքրքրությունների, ընտրում են իրենց համար մասնագիտական կոմիտեներ:

ԻԿՕՄ Հայաստանի նախագահ Հայկ Մկրտչյանը հանրապետության թանգարանների տնօրեններին ու աշխատողներին, ՀՊՄՀ ղեկավար կազմին ծանոթացրեց կազմակերպության կանոնադրությանը, գործառնություններին, աշխատանքային սկզբունքներին, նաև հպարտությամբ նշեց, որ կազմակերպությանն անդամակցում են 300 անհատ անդամ և 11 ինստիտուցիոնալ կազմակերպություն: Նաև տեղեկացրեց՝ ԻԿՕՄ-ը բաց է բոլորի համար և նրան կարող են անդամակցել նաև ուսանողները, իսկ մասնագիտական համայնքի ներկայացուցիչները աշխարհի տարբեր երկրներում կարող են անվճար թանգարաններ այցելել:

Սիլվա Ասրյան

### «Աշխարհագրությունը աշխարհը բացող պատուհան է».



«Աշխարհագրությունը աշխարհը բացող պատուհան է: Աշխարհագրությունը աշխարհի հետ շփում է, մարդկանց, ազգերին, էթնոսների ծանոթանալ է, քաղաքական արժեքները հասկանալ և ըմբռնել է: Առանց աշխարհագրության հնարավոր չէ կյանքը շարունակել, որովհետև լինելով ընդարձակ գիտություն՝ /թագավորական գիտությունների շարքին է դասվում/, աշխարհագրությունը, մարդուն հնարավորություն է տալիս ճանաչել աշխարհը, սեփական հայրենիքը, հողը, երկիրը, միաժամանակ՝ նաև հարևաններին, որովհետև աշխարհագրությունն ունի տարածական ընդգրկում, և նրա մեջ մտնում են նաև հարևանները՝ բարոյական են նրանք, թե՛ ոչ»,- ասում է վաստակաշատ մանկավարժ, գիտնական Յուրիկ Մուրադյանը:

#### Յուրիկ Մուրադյան

աշխատում է «Հայկական լեռնաշխարհը որպես քաղաքակրթության օրրան, հայերի քաղաքակրթական ձեռքբերումները» աշխատության վրա: Ապրիլի 16-ին հարազատ ֆակուլտետում ներկայացրած դասախոսության թեման ավելի քան հետաքրքիր էր և արդիական՝ «Անհետացած և գոյություն ունեցող քաղաքակրթություններ»:

Ֆակուլտետի ղեկան Սիրինե Շողերյանը շնորհակալություն հայտնեց ճանաչված գիտնականին՝ հրավերն ընդունելու համար:

«Յուրիկ Մուրադյանի գիտական և մանկավարժական գործունեությունը կարևոր մասնագիտական ժառանգություն է, որը շարունակում է նպաստել կրթության և գիտության զարգացմանը: Նա գիտնական է, որն իր գործունեությամբ ձևավորում է արժեքային համակարգ: Նրա բազում գիտական հոդվածների, բուհական և դպրոցական դասագրքերի, մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հեղինակ է, որոնցով կրթվել և դաստիարակվել են սերունդներ»,- ասաց Աշխարհագրության և նրա դասավանդման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիետա Մուրադյանը, ում համար պատիվ էր ներկայացնել բազմահմուտ աշխարհագետ իր հայրիկին:

Գիտության ամսվա շրջանակում ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի դասախոսների և ապագա աշխարհագետների համար դասախոսությամբ հանդես եկավ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանը, որը շուրջ 48 տարի աշխատել է մանկավարժական համալսարանում, որից 44 տարին վերոհիշյալ ֆակուլտետում նվիրել է ապագա աշխարհագետների դասավանդմանը:

Տարիների ընթացքում նա ստեղծել է բուհական և դպրոցական աշխարհագրության 17 դասագիրք, այդ թվում՝ նաև մենագրություններ: Այժմ

թյունը, Արևելքն ընդդեմ Արևմուտքի մշակութային բախումը, մահմեդական քաղաքակրթությունը՝ արաբական, պարսկական, թուրքական, մալայան ենթամշակույթներով:

Չեկուցողն անդադառնում է քրիստոնեական քաղաքակրթության բաժանումներին՝ առանձնացնելով արևմտեվրոպական քաղաքակրթությունն իր հարուստ մշակույթով:

Գորբալ աշխարհի մարտահրավերներն այսօր մտահոգիչ են. Հանթինգտոնի բացահայտումների համատեքստում՝ ինչի կհասցնի բախումը և ուր կտանի երկխոսությունը, քաղաքակրթությունների բախման մերօրյա վտանգների մասին է, որ զգուշացնում է՝ աշխարհին պետք է քաղաքակրթությունների երկխոսություն՝ դիվանագիտությունը պետք է կարողանա հարթել:

ՀՊՄՀ Որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավար Անի Հակոբյանն իր հիացմունքն արտահայտեց՝ ասելով. «Տարբեր ոլորտների, այդ թվում և աշխարհագրության ոլորտի գիտնականներից շատ քչերն են կարողանում բարձրանալ իրենց գիտությունների դասակարգ-

ման դասախոս-գիտնականին լսելու պատեհ առիթն ունենալու համար՝ ընդգծելով՝ լավ ուսուցիչը լավ ծնողի նման մեծ բախտավորություն է:

«Ժամանակակից աշխարհում քաղաքակրթությունների հարցերը շատ կարևոր են, առանցքային նշանակություն ունեն, և իմ ներկա դասախոսությունը մուտք էր այն հետագա աշխատանքի, որը ես կատարում եմ արդեն վեց տարի՝ «Հայկական լեռնաշխարհը որպես քաղաքակրթության օրրան, հայերի քաղաքակրթական ձեռքբերումները» աշխատությունը հրատարակելու համար»,-ասում է գիտնականը և խիստ անհրաժեշտ համարում, որ մեր հանրությունը ծանոթանա իր ազգային արժեքներին, որ ստեղծվել է հայկական լեռնաշխարհի տարածքում և նրանից դուրս:

Մեկ ժամ տևած դասախոսությունը ուսանողները լսեցին համակ ուշադրությամբ, իրենց երախտագիտությունը հայտնեցին պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանին, նաև բազմաթիվ հարցեր ուղղեցին գիտնականին և ստացան նրա ստորագրությամբ աշխարհագրության հեղինակային դասագրքեր:



ման համակարգերից, սինթեզել, միավորել, տեսական վերացարկումներ անել իրենց սեփական և առհասարակ հարակից գիտությունների մեջ: Հիացած են, որ այդ շատ քիչ մարդկանցից մեկին լսելու, ունենդրելու բախտավորություն ունեցան»:

Անի Հակոբյանը շնորհավորեց ուսանողներին՝

Հանդիպման ավարտին պրոֆեսորն ուսանողներին հորդորեց՝ գիրք կարդացեք, ծանոթացեք քաղաքակրթությունների ստեղծած արժեքներին և ամփոփեց. «Մարդկության մեծագույն դաստիարակն ուսուցիչն է, ոչ մեկը չի կարող նրա նման արժեքներ ստեղծել»:

Սիլվա Ասրյան

Ապրիլի 13-ից Հայկական գրադարանային ասոցիացիայի նախաձեռնությամբ մեկնարկել էր «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագիրը, որն այս տարի կրում է «Դպրոցական գրադարանները նորարարության տիրույթում» խորագիրը: Ծրագրի հիմնական նպատակն էր հանրության ուշադրությունը սևեռել դպրոցական գրադարանների կրթամշակութային դերին: Այդ շրջանակներում վարժարանի հյուրն էր Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգի հայալեզու գրականության բաժնի վարիչ Ստելլա Թարոյանը:

Հանդիպմանը մասնակցում էին վարժարանի հայոց լեզվի և գրականության հոսքի աշակերտները, որոնք ոչ միայն ունկնդիր էին, այլև միջոցառման ակտիվ դերակատարներ:

### ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



Ստելլա Թարոյանի կազմակերպած ինտերակտիվ հատուկ խաղի շնորհիվ վերահաստատվեց՝ վարժարանի սաներն ակտիվ ընթերցողներ են, որոնք քաջածանոթ են հայ և արտասահմանյան գրականությանն ու մշակութային արժեքներին: Ինտերակտիվ ձևաչափը հնարավորություն տվեց աշակերտներին նորովի ընկալել գրադարանային միջավայրը՝ որպես նորարարական հարթակ:

Ապագա բանասերներն իրենց հուզող հարցերն ուղղեցին մասնագետին՝ քննարկելով գրադարանային գործի զարգաց-

ման հեռանկարներն ու գրքի դերը ժամանակակից աշխարհում: Հանդիպման ընթացքում Ստելլա Թարոյանը նաև մասնագիտական արժեքավոր խորհուրդներ տվեց աշակերտներին՝ կողմնորոշվելու ժամանակակից գրականության հարուստ ընտրանու մեջ: Նա առանձնացրեց մի շարք արդի հեղինակների և ստեղծագործություններ, որոնք այսօր մեծ հետաքրքրություն են վայելում ընթերցողների շրջանում՝ հորդորելով երիտասարդներին միշտ հետամուտ լինել որակյալ

գրականությանը:

Միջոցառման ավարտին վարժարանի անձնակազմն ու աշակերտներն իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին հյուրին՝ բովանդակակից այցի, փորձի փոխանակման և դպրոցականների մեջ ընթերցանության հանդեպ նոր ոգևորություն սերմանելու համար:

Գրադարանային շաբաթը, սակայն, այսբանով չավարտվեց վարժարանականների համար: Ծրագրի շրջանակում անգլերենի հոսքի ասնները հյուրընկալվել էին Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, որտեղ մասնակցեցին Լիա Ասլանյանի «Քաղաքը փնտրելիս» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսին:

Աշակերտները բացառիկ հնարավորություն ունեցան անմիջական շփվելու հեղինակի հետ, ունկնդրելու նրա ստեղծագործությունները, ծանոթանալու նորատիպ ժողովածուի բովանդակությանը:

Նմանատիպ այցելությունները ոչ միայն սեր են արթնացնում դեպի ժամանակակից պոեզիան, այլև աշակերտների համար բացահայտում են գրադարանը՝ որպես կենդանի մշակութային երկխոսության և գրական հանդիպումների անփոխարինելի վայր:

### «Լեզու, մշակույթ և կրթություն. արդի հիմնախնդիրներ». գիտաժողով և մասնագիտական կողմնորոշում

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետում ապրիլի 20-ին կազմակերպվել էին գիտաժողով՝ «Լեզու, մշակույթ և կրթություն. արդի հիմնախնդիրներ» խորագրով, որը մասնագիտական կողմնորոշման բաց դռների օրվա ձևաչափ ուներ:

Պաշտոնական բացմանը ներկաներին ողջունեց ֆակուլտետի ղեկան Տիգրան Միքայելյանը՝ ներկայացնելով Բոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից կազմակերպված միջոցառման նպատակը և ուղերձները:

Տիգրան Միքայելյանը հույս հայտնեց, որ նախաձեռնությունը կլինի ոչ միայն բաց դռների օրվա ճանաչողական միջոցառում, այլ իսկապես կբացի դռները նոր ընկերության, բարեկամության և տարաբնույթ շփումների համար:

Նա ողջունեց հմ. 138, Հրազդանի Օրբելու անվան, Արմավրի և մյուս դպրոցների մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին՝ մաղթելով, որ կարողանան քաղել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ համալսարանների

գործընկերներին վստահեցրեց՝ ձեր մասնակցությունը մասնագիտական աջակցություն է և մասնագիտական արժեք ունի:

«Այսօրվա ակադեմիական միջոցառումը վերաբերում է ոչ միայն տեսական ու գործնական արդյունքներին, այլև միջոցառում է՝ ուսանողների ծայր լսելի դարձնելու, միջոցառում է, որտեղ նրանց համար անհնարինը կարող է դառնալ հնարավոր, որտեղ որոշակի վախերը կարող են դառնալ մեծ հարթակ հետագա կյանքի համար, և կամուրջները, որ կառուցում ենք տարբեր համայնաբանների հետ, լինեն շարունակական, որովհետև ամեն մի նախաձեռնություն նրանց համար կամուրջ անցնելու պես մի բան է: Մենք ուզում ենք, որ մեր ուսանողները ամենուր լավագույնը լինեն»,- ասաց Բոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մանան Դալալյանը:

«Սա արդեն երեք անգամ անցկացրած միջազգային կոնֆերանսի շարունակությունն է: Այս անգամ որոշեցինք, որ երիտասարդ հետազոտողներին պետք է տանք ելույթ ունենալու հնարավորություն, որպեսզի ներկայացնեն իրենց ձեռքբերումները օտար լեզվի, հիմնականում անգլերենի դասավանդման ոլորտում: Միաժամանակ նպատակ ենք դրել էլ ավելի ամրապնդել մեր կապը դպրոցի հետ, դասավանդման մեթոդաբանության նորարարությունները և ձեռքբերումները, մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հետ կապված, իրենց անմիջական արտացոլումը

գտնեն դպրոցի մասնակցությամբ, այդ նորարարություններին ծանոթանան նաև դպրոցների ուսուցիչները»,-նախաձեռնության խորհուրդը գաղտնաբերեց Օտար լեզուների ֆակուլտետի ղեկան Տիգրան Միքայելյանը:

Դեկանը ներկայացրեց՝ սա նաև լավ հնարավորություն է աշակերտներին ծանոթացնելու մանկավարժական համալսարանի հետ: Նախկինում մասնագիտությունները ներկայացվել են ընդհանրական ձևով, այս դեպքում տեղում ներկայացվել է փոքրիկ լաբորատորիա՝ մասնագիտությունը բաց է ներկայացված՝ ինչ ասպեկտներ ու հայեցակետեր ունի օտար լեզուն և օտար լեզվի դասավանդման մեթոդիկան, քերականությունը՝ բանագիտությունը, հնչյունաբանությունը, լեզվական մակարդակները, և ինչպես են դրանք դասավանդվում:

«Հատուկ մանկավարժական պրակտիկա» սեղանիկի շուրջ համախմբված ուսանողները պատմում էին, թե ինչպես է համալսարանում անցկացվում մանկավարժական պրակտիկան, ինչ-որ տեղ նաև մասնագիտական կողմնորոշում էր՝ կապված հատկապես օտար լեզուների հետ:

անհրաժեշտության դեպքում դպրոցականներին ծանոթացնել այլ ֆակուլտետների հետ ևս:

Նախաձեռնությանը հրավիրվել էին և մասնակցում էին Երևանի ու մարզերի հինգ դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ, ինչպես նաև դասախոսներ և ուսանողներ Երևանի պետական համալսարանից, Եվրոպական համալսարանից: Շարունակությունը առցանց ձևաչափով էր՝ միջոցառմանը միացան նաև միջազգային համալսարանների գործընկերներ, մասնավորապես ԱՄՆ-ից հրավիրյալ դասախոս, ազգությամբ հայ Անի Զաքարյանը:

Միջոցառումը շարունակվեց «Լեզվաբանություն և մշակույթ» և «Մանկավարժություն և մեթոդիկա» ուղղություններով մասնաճյուղերով և ամփոփվեց գործնական աշխատարաններով /Vorkshops/ ու ինտերակտիվ պարապմունքներով:

Մասնագիտական կողմնորոշման տեղեկատվություն տալու համար նախաձեռնությանը միացել էր Մանկավարժական համալսարանի Պրակտիկայի և կարիերայի կենտրոնի թիմը՝ Հասմիկ Առաքելյանի գլխավորությամբ:

«Բաց դռների օրը կառուցողական իմաստ ունի՝ աշակերտները, ինչու չէ, նաև ապագա ուսանողներն ավելի մոտիկ կծանոթանան Օտար լեզուների ֆակուլտետին, ինչպես նաև շրջանավարտներին, որոնց մի մասը մեր կոլեգաներն են»,-ասաց մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ղեկանի տեղակալ և միջոցառման գլխավոր կազմակերպիչ՝ Ռուզաննա Խաչատրյանը:

Սիլվա Ասրյան



ՀՈՐԲԵԼՅԱՆ

-Տիկին Ջոհրաբյան, ինչո՞ւ ընտրեցիք հատուկ կրթության ոլորտը:
-Հատուկ կրթության ոլորտի ընտրությունն ինձ համար կարևորվեց այն ժամանակ, երբ դեռ ուսանողական տարիներից սկսեցի աշխատել օժանդակ դպրոցում՝ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ:



Իզաբելլա Ջոհրաբյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

-Ի՞նչ հեռանկարներ ունի այսօր հատուկ կրթության ոլորտը:

-Հատուկ կրթությունն իրականացնում է զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը: Ելնելով կրթական բարեփոխումներից և 21-րդ դարի պահանջներից՝ ավանդական ուսուցման մեթոդների հետ համատեղ կիրառվում են ժամանակակից այլընտրանքային լրացուցիչ տեխնոլոգիաներ, տեխնիկական սարքեր, որոնք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացը դարձնում են ավելի արդյունավետ:

-Ինչպե՞ս եք գնահատում համընդհանուր ներառականության ընթացքը և մեզանում հանդիպող խնդիրները:

-Ներառական կրթության իրականացման գործընթաց-

ին իմ մասնակցությունը սկսվել է դեռևս 2007 թվականից՝ «Կրթություն բոլորի համար» ծրագրից: Առաջին և երկրորդ ծրագրերը համակարգվեցին իմ կողմից, իսկ արդեն երրորդ ծրագրին մասնակցեցի որպես գիտական խորհրդատու: Սա ևս վկայում է այն մասին, որ ես ներառական կրթության գաղափարի ջատագովներից մեկն եմ:

«ՀԵՏԱՔՐՔԻՐ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ, ՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄԲՈՂԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԻՆՁ ՀԵՏ Է».

Ներառական կրթությունը մեր օրերում անհրաժեշտություն է, և ակնկալում է որակյալ կրթություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար: Ներառական կրթությունը կրթական բարեփոխումների մաս է կազմում և օրենսդրական հիմքով իրականացվող ծրագիր է:

Հանրակրթական դպրոցներում ներառված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առկա են բաց և ճկուն ուսումնական ծրագրեր, դասավանդման ժամանակակից միջոցներ, հարմարեցված և խթանող միջավայր, իսկ ուսուցիչները պարբերաբար վերապատրաստվում են: Այս ամենը փաստում է ներառական կրթության անհրաժեշտությունն ու առավելությունը: Հավելեմ, որ համակարգում դեռևս առկա են մի շարք խնդիրներ և բացթողումներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և երբեմն ներառումները ձևական բնույթ են կրում: Սակայն պետք է հաշվի առնել, որ որակյալ կրթության ապահովման հիմքը բազմազանության ընդունումն է՝ սահմանված նորմերի, մոտեցումների, ուսումնական ծրագրերի, դասավանդման փորձի և այլնի: Իհարկե առկա են մի շարք մարտահրավերներ և անհրաժեշտ է գտնել նրանց հաղթահարման ուղիները:

-Տարին հոբելյանական էր Ձեզ համար. յոթ տասնամյակի հեռուից ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր անցած ճանապարհի ամենակարևոր իրադարձություններին:

-Ինձ համար կարևոր և նշանակալից իրադարձություն էր բանասիրությունից դեպի հատուկ կրթություն գնալը, որն, իհարկե, գիտակցված քայլ էր, քանզի օժանդակ դպրոցում աշխատանքային 13 տարիներն իրենց հետքը թողեցին, և ես իմ գործունեությունը պատկերացրի հատուկ կրթության ասպարեզում: Հավելեմ, որ նեղ մասնագիտական կրթություն ստացա Մոսկվայի մանկավարժական ինստիտուտում, որտեղ էլ հանձնեցի մասնագիտական քննությունները:

Ինձ համար շրջադարձային տարի էր 1996 թվականը, երբ ՕԶՈ մասնագիտական խորհուրդն ինձ շնորհեց մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Ի դեպ՝ դա օլիգոֆրենմանկավարժության բնագավառի

առաջին ատենախոսությունն էր Հայաստանում: Աշխատանքային գործունեությանս ընթացքում բազմաթիվ պատվոգրեր ու շնորհակալագրեր են ստացել, սակայն հպարտանալու առիթ էր ՀՀ Լուսավորության նախարարության կողմից ինձ շնորհված «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանը:

-Մանկավարժականը Ձեր կյանքում:

-Հետաքրքիր զգացողություն ունեմ, որ Մանկավարժական ամբողջ կյանքում ինձ հետ է: Հարագատ բուհի Բանասիրական ֆակուլտետի, ինչպես նաև առկա ասպիրանտուրայի շրջանավարտ եմ: Ուսումնառության անմիջապես հաջորդեց աշխատանքային գործունեությունս, որը շարունակվում է մինչև այսօր:

-Կխոսե՞ք Ձեր մասնագիտական ձեռքբերումների և առաջիկա անելիքների մասին:

-Եթե խոսենք մասնագիտական ձեռքբերումների մասին, ապա այն երկար ճանապարհ է անցել: Մասնագիտական գործունեության մեջ կարևորում եմ դասախոսական աշխատանքը և որակյալ մասնագետների պատրաստման գործընթացը, երկար տարիների աշխատանքային փորձը ուսանողներին փոխանցելը, մասնակցությունս ԱՄՆ-ում և Գերմանիայում իրականացվող միջազգային տարբեր ծրագրերին, կոնֆերանսներին ու սեմինարներին, որոնք հնարավորություն տվեցին նոր մոտեցումներով ու մեթոդներով շարունակել դասավանդման գործընթացը:

Առաջիկա անելիքները զարգացման ընթացքում են. կարծում եմ նույն ոգևորությամբ կկարողանամ աշխատել ուսանողների հետ, մասնագիտական աջակցություն ցուցաբերել տարբեր կրթօջախներում աշխատող մեր շրջանավարտներին, իհարկե, նաև շարունակելով զբաղվել գիտական աշխատանքով:

-Ո՞վ է եղել մասնագիտական կրթության մեջ Ձեր ուսուցիչը:

-Մասնագիտական կրթության իմ առաջին ուսուցիչը եղել է մայրս, որը Հայաստանի առաջին դեֆեկտոլոգներից էր. հատուկ կրթության ոլորտում նրա ավանդը շատ մեծ է:

-Ի՞նչ կմաղթեք ապագա մանկավարժներին:

-Կմաղթեմ, որ սիրեն իրենց մասնագիտությունը, մեծ պատասխանատվությամբ մոտենան իրենց ուսումնառությանն ու կատարած աշխատանքին, լինեն բարի, մարդասեր, համբերատար, լավատես, կարողանան գտնել իրենց ուրույն տեղը մանկավարժության մեջ և արժանի լինեն մանկավարժի պատվավոր կոչմանը:

Ջրույցը՝ Սիլվա Ասրյանի

Ճանաչողական բաց դասեր՝ նվիրված Ստեփան Լուսիկյանի 70-ամյակին

XX դարի վերջի անվանի երգահան, երաժշտական-հասարակական գործիչ, դաշնակահար Ստեփան Լուսիկյանի «Ճպլուռն ու մրջյուն» բալետը կարծես նոր շունչ հաղորդեց մայր հայրենիքի մշակութային կյանքին: Արդեն երկու տարի է, ինչ հազարավոր մանուկներ ակնատես են լինում վառ բալետային ներկայացմանը Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ինչը շատ ողջունելի է արդի թվային հասարակության պայմաններում: Բալետի հաջողության գաղտնիքը մանկուց ծանոթ ստեղծագործության սյուժեին էր, որը ծանոթ է թե՛ հայ, թե՛ ռուս մեծ ու փոքր սերնդին: Իվ. Կռիլովի «Сиреоза и муравей» («Ճպլուռն ու մրջյուն») առկն անզուգական թարգմանել է հայ ականավոր մանկագիր Աթաբեկ Խնկոյանը, ում անունով է կոչվում Երևանում Ազգային մանկական գրադարանը: Իսկ այդ ստեղծագործության հեքիաթային երաժշտության կոմպոզիտորն է Ստեփան Լուսիկյանը:

2026 թվականի ապրիլի 12-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի հայկական կիրակնօրյա «Վերածնունդ» դպրոցում տնօրենի՝ մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով տեղի ունեցան ճանաչողական բաց դասեր՝ նվիրված տաղանդաշատ կոմպոզիտոր Ստեփան Լուսիկյանի 70-ամյակին:

Հատկանշական է, որ ներկա էին նաև Ռուսաստանում ՀՀ դեսպանության խորհրդատու և կոմպոզիտորի դուստր Եվա Լուսիկյանը, ընտանիքի անդամները, ինչպես նաև այլ պատվավոր հյուրեր:

Ուսուցչական համակարգը աշակերտների հետ միասին ներկայացրին կոմպոզիտորի ստեղծագործական ուղին՝

լեցուն հայրենասիրությամբ ու հավատքով՝ «Կանգնիր, իմ Գյումրի», «Հինվորի երգը», «Պանդուխտ եմ», «Ազատ Հայաստան», «Նոր Հայաստան»: Նշենք, որ Ստեփան Լուսիկյանը հեղինակ է նաև մեկ սիմֆոնիայի և բալետի, դաշնամուրային կոնցերտների, կվարտետի, սոնատների, գրել է երաժշտություն 40 թատերական ներկայացումների և կինոֆիլմերի համար, մասնավորապես 90-ական թվականներին բեմադրվել են «Բաղդասար աղբար» և «Մեծապատիվ մուրացկաններ» մյուզիքլները, իսկ 1998 թ. Գերմանիայում հեղինակի կատարմամբ հնչել է դաշնամուրի երկրորդ կոնցերտը:

Բաց դասերի ընթացքում աշակերտները ներկայացրին երաժշտական և պարային համարներ, մասնավորապես ռուսերեն և հայերեն ընթերցվեց «Ճպլուռն ու մրջյուն» առակը: Միջոցառումն ավարտվեց Ստեփան Լուսիկյանի «Նոր Հայաս-

տան» երգով. դպրոցի սան, բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր, «Голос. Дети» («Մանուկների ձայնը») հաղորդման մասնակից Դավիթ Յոլյանն իր անզուգական կատարումով հուզեց ներկաների սրտերը:

Այս միջոցառումը հնարավորություն տվեց ևս մեկ անգամ հիշել հայ մեծերին, այս անգամ նաև երաժշտության ոլորտում, Կոմիտասի, Մակար Ելմայրյանի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի անունների կողքին հնչեցնել նոր անուններ, որոնք խոր հետք են թողել հայրենասեր և կրթված սերունդ դաստիարակելու գործում:

«Ճպլուռն ու մրջյուն» բալետն այդ փաստի վառ վկայությունն է:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց



Հարկ է նշել, որ 2025 թվականին՝ Հայաստանում ամենամյա ամառային արձակուրդների ընթացքում, «Վերածնունդ» դպրոցի սաները դիտեցին այդ գեղեցիկ բալետի բեմադրությունը, իսկ

**Ապրիլի 29-ը Պարի միջազգային օրն է: Շնորհավորում ենք պարարվեստի ոլորտի բոլոր մասնագետներին:**  
**Մանկավարժական համալսարանի ուսանողները մասնակցեցին «Արի, պարի» փոնական միջոցառմանը՝ նվիրված Պարի միջազգային օրվան, որը խորհրդանշում էր ազգային պարարվեստի ժառանգության ու արժանատի հանրահռչակումը:**  
**Կուլտուրայի ֆակուլտետի «Պարարվեստի մանկավարժություն և նրա դասավանդման մեթոդիկա» մասնագիտության շուրջ 80 ուսանող մասնակցեց պարի մասսայական փոնական միջոցառմանը, շուրջ 50 ուսանող միացավ ազգագրական-ժողովրդական պարերի ֆլեշ-մոբերին, իսկ 30 ուսանող՝ Հանրապետության հրապարակի փոնական շուրջպարին:**  
**Միջոցառման կազմակերպիչներից էր նաև ՀՊՄՀ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը. նա ընդգծեց՝ նախաձեռնությունը ևս մեկ անգամ հաստատեց հայ ժողովրդի միասնականությունն ու ոգեղենությունը:**



«Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

Վեստի երախտավոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի մտահղացմամբ և գիտական կազմակերպչական ջանքերով:

հարյուրավոր ազգագրագետներ են պետք, որ փրկեն մեր ազգագրությունը: Եվ հայտնվեցին ազգագրագետներ, որոնք 20-րդ դարասկզբին հավաքեցին գրեթե մեր ողջ ժառանգությունը: Ասպարեզից դուրս էր մնացել պարը. Կուլտուրայի գագա՝ ինչ ենք կորցնում և այդ ուղղությամբ

## «ՊԱՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՆ ԱՐԺԵՔՆ Է, ՈՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԱՐՈՂԱՑԵԼ Է ԱՄՐԱԳՐԵԼ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԽԱՌՆԱԿԱԾՔԸ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ»:

տավոր Սրբուհի Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» մենագրության 2-րդ հատորի շնորհանդեսը, որը կազմակերպվել էր Հայաստանի պատմության թանգարանի և ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ:

Քիչ է ասել՝ այդ գրքում ամփոփված է հայ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած պարային ժառանգությունը, որը խնամքով հավաքել, մշակել ու մեզ է ներկայացրել ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի դուստրը՝ էթնոպարագիտության ոլորտի մեծ երախտավորը: Տեղին է, որ գրքի թարգմանիչը փաստում է՝ այն, ինչ արեց Կուլտուրայի հայ երգարվեստում, Սրբուհի Լիսիցյանը նույնը խիզախեց անել հայ պարարվեստում:

որոշակի գործունեություն ծավալեց՝ երաժշտությունից վեր դասելով պարը և բարձրաձայնելով՝ ամբողջ տիեզերքի շարժումը պար է և պարով պետք է կրթել ժողովրդին:

թային այն արժեքն է, որի շնորհիվ հայ ժողովրդը կարողացել է ամրագրել իր ազգային խառնվածքը և հավաքական նկարագիրը, դա է պատճառը, որ մեր ոգեղենիկ պարերը եկել հասել են մեզ Սրբուհի Լիսիցյանի, Վահրամ Արեստակեսյանի միջոցով՝ որպես միասնականության խորհրդանշի, խորհուրդ:



«Կատարված թարգմանությունը իրականացել է մասնագիտական հետազոտությունների, համեմատությունների և ազգագրական և լեզվագիտական համեմատական ուսումնասիրությունների համատեքստում», ներկայացնում է շնորհանդեսը վարող Սարգիս Նաջարյանը:

Բանախոսը փաստեց՝ Սրբուհի Լիսիցյանը գրեց առաջին երկու հատորը, որը մեր պարի նախասկզբ կարելի է համարել:

Մեր մշակութային գանձարանում իր ուրույն տեղն ունի էթնոպարագիտությունը՝ հիմնադիր, պարարվեստի երախտավոր, գիտնական, մշակութաբան Սրբուհի Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» հսկայածավալ կրթողական աշխատությունը: Սրբուհի Լիսիցյանը կարողացել է ոչ միայն հավաքել, փրկել հարյուրավոր պարեր, այլև իր պարագիտական, մշակութաբանական գիտական ուսումնասիրությունների արդյունքում մեզ է տվել պարի ամբողջական հենքը՝ հիմնական շարժողական համակարգը: Նա կարողացել է բանասացների միջոցով հավաքագրել պարի այնպիսի պատանդներ ու նմուշներ, որտեղ ես նկատում եմ լիսիցյանական փոքրիկ մշակումներ: Աշխարհի ոչ մի ժողովուրդ չունի նմանօրինակ պարի աստվածաշունչ՝ երբեք հատորից բաղկացած, որը նկարագրում է մեր ժողովրդի շարժողական համակարգը՝ մեր ազգային խառնվածքն ու ոգեկերտվածքը, ավանդույթները, ծեսերն ու նիստուկացը:

Ելույթ ունեցողները պատմական ու մշակութային ոլորտի մեծ իրադարձություն համարեցին պատմական գիտությունների դոկտոր, կենսաբան, ազգագրագետ, արվեստաբան, Խորհրդային Միությունում էթնոպարագիտության հիմնադիր, պարային շարժումների գյուտի հեղինակ, պարագիտության հայկական դպրոցի սկզբնավորող Սրբուհի Լիսիցյանի հիրավի կրթողային աշխատությունը:

Թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը կարևորեց Սրբուհի Լիսիցյանի վաստակի արժևորումը մայր թանգարանում, նաև հիշեցրեց՝ նրա հայրը՝ Ստեփան Լիսիցյանը, շուրջ 20 տարի ղեկավարել է թանգարանի ազգագրության բաժինը:

«Մեր հնագույն պարերը՝ 500 շուրջպար, ամբողջ Արևելքի քաղաքակրթությունն է ներկայացնում, որ հազարամյակներից հասել է մեզ»,-ասաց բանախոսը՝ անդրադառնալով Սրբուհի Լիսիցյանի և Վահրամ Արեստակեսյանի գործը պատվով շարունակող Կարեն Գևորգյանի՝ առաջիկայում հրատարակվելիք գրքերին:

Համալսարանի պարարվեստի մասնագիտության ուսանողներն առաջին անգամ հանդես եկան Ս. Լիսիցյանի 2-րդ հատորում ներկայացված ռազմական և այլ պարերի բացառիկ կատարումներով:

Գիրքը ծնունդ է առել Հակոբ Սողոմոնյանի բացառիկ թարգմանության և հայ պարար-

Գրքի թարգմանիչը՝ գրող, հրապարակախոս Հակոբ Սողոմոնյանը հպարտ է, որ գիրքը թարգմանելու պատիվն է ունեցել. 2-րդ հատորում նա ներկայիցի ուշադրությունը հրավիրեց հայ ժողովրդի ինքնակազմակերպման դրսևորումների և մշակույթի տարածման վերաբերյալ Լիսիցյանի վերաբերմունքին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արվեստների վարչության գլխավոր մասնագետ, արվեստագիտության թեկնածու Նարինա Կիլիչյանի համար տարիների երազանք է եղել թարգմանված տեսնել Սրբուհի Լիսիցյանի հատորները: Նա հետադարձ հայացքով հիշեց էթնոպարային գիտնականի արխիվում աշխատելու իր տարիները, ընդգծեց դրանց աղբյուրագիտական մեծ արժեքը, իսկ Սրբուհի Լիսիցյանին անվանեց հայ մշակույթի ռահվիրա: Նա հորդորեց երիտասարդ պարագետներին՝ հետազոտել Լիսիցյանի անտիպ գործերը, որոնք կան նրա արխիվում:

Սիվա Ասրյան



## Հայկական կարմիր խաչը 106 տարեկան է

Հայկական կարմիր խաչը 106 տարեկան է: Հայկական կարմիր խաչի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար Աստղիկ Մանուկյանը, աշխատակիցներ Էլեն Սարգսյանը և Անուշ Հովհաննիսյանը ապրիլի 22-ին, ՀՊՄՀ ռեկտորի հետ կնքված համագործակցության հուշագրի շրջանակում, հանդիպեցին Մանկավարժական համալսարանի ուսանողների հետ:

Նրանք ուսանողներին ներկայացրին պատմական ակնարկ՝ Հայկական կարմիր խաչի առաքելության, հնարավորությունների ու գործունեության մասին:

Հայաստանում կարմիր խաչի կազմակերպությունը հիմնադրվել է 1920 թվականին, հետագայում դարձել ICRC միջազգային կազմակերպության անդամ. 1995 թվականին Հայկական կարմիր խաչի ընկերությունը ճանաչվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից ու դարձել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի

ընկերությունների միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ:

Հայկական կարմիր խաչի ընկերությունը Հայաստանում գործող հայտնի մարդասիրական կազմակերպություններից մեկն է, որը համատեղ ծրագրեր է իրականացնում տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ:

Աստղիկ Մանուկյանը ուսանողների հետ խոսեց իրենց կազմակերպության գործունեության մասին՝ բնական աղետների արձագանք, առողջապահական և սոցիալական խնամքի աջակցություն, օգնություն բռնազաղթածներին և այլն, իսկ հետագայում դարձել է առաջատար մարդասիրական կազմակերպություն Հայաստանում:

Այսօր կազմակերպությունն աշխատանքներ է իրականացնում 7 ուղղություններով, որի հիմքում ընկած են մարդասիրությունը, անկողմնակալությունը, չեզոքությունը, կամավորությունը, եզակիությունը, համընդհանրությունը:

Երբեմն դժվար է այս սկզբունքների պահպանումը, սակայն փորձում են աշխատել դրանց սահմաններում՝ աջակցություն ցուցաբերելով դրանց կարիքն ունեցող մարդկանց:

Համալսարանի ուսանողները հաճախ են ընդգրկվում կամավորական աշխատանքներում, իսկ նրանցից ոմանք հետագայում աշխատանքի են ընդունվում այս կառույցում՝ իրենց աշխատանքային կենսագրությունն սկսելով հենց այստեղից:

Կարմիր խաչի ներկայացուցիչները հանգամանորեն ներկայացրին կամավորական աշխատանքի ա-

ռանձնահատկություններն ու համագործակցության շրջանակը, հնարավոր մարտահրավերները, խոսեցին տարածաշրջանային և տարածքային մասնաճյուղերի մասին՝ ուսանողներին հորդորելով միանալ իրենց թիմին:

Հանդիպումն ընթացավ երկխոսության ձևաչափով, և ուսանողներն ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Համալսարանի Պրակտիկայի և կարիերայի կենտրոնի աշխատակազմը՝ Հասմիկ Առաքելյանի ղեկավարությամբ, առաջիկայում կհամակարգի կամավորական աշխատանքի պատրաստ ուսանողների համագործակցությունը Հայկական կարմիր խաչի համապատասխան մասնագետների հետ:





Ճաշակով կահավորված բեմ, իսկ բեմում՝ հրաշք աղջիկներ ու տղաներ. 4-րդ «Բ» դասարանի ավարտական հանդեսն է՝ նվիրված հին ու նոր Երևանին, որն սկսվում է մայրաքաղաքին բնորոշ լուսաբացի չքնաղ արևածագով...

Ահա գաղտնագերծում են Երևանի, հրապարակի «7 աղբյուր» կոչվող ցայտաղբյուրը, հրապարակի մեծ ժամացույցը, որ Թամանյանական գլուխգործոցներից է: Երևի քչերը կհմանան, որ միջնադարյան Երևանի նշանավոր եկեղեցիներից մեկի՝

յան բակեր, դեպի արհեստագործական փողոցներ՝ ծանոթանում վարպետների մասին պատմություններին: «Հին թաղին կոչել են Շահար, որը թարգմանաբար նշանակում է քաղաք: Այս թաղամասում այժմ մերօրյա «Մոսկվա» կինոթատ-

կազմի հեղինակը. «Նրա նախագծած հատակագիծը նման էր մե՛ծ արևի, Երևանը նա անվանել է արևի քաղաք ու սփռել երկու Մասիսների առջև և իր արևի քաղաքի բնակիչներին պարզել պատշգամբներից Մասիսներին նայելու և եղանակային այլ գույակություններ անելու հնարավորությամբ»:

Հանդեսն այնքան ուսուցողական էր, այնքան ճանաչողական, աշակերտներն այնքան բնական էին ներկայացնում Երևանի հին եկեղեցիների քանդանոսն ու նրանց տեղում նոր շինություններ կառուցելու պատմությունները, որ թվում էր, թե ճանապարհորդությունն իրական է, ու պատմություններն էլ վերջ չունեն:

Երկար շրջագայությունից հետո ավարտվում է ճամփորդությունը հայոց մայրաքաղաք Երևանին նվիրված հրաշալի երգով:

Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք, Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք...

Երևանի հին ու նոր պատմությունները կարծես թե վերջ չունեն, և 4-րդ «Բ» դասարանի աշակերտները դեռ ինչքան պատմություններ պիտի լսեն մեծերից սիրելի մայրաքաղաքի մասին...

Իսկ առայժմ հրաժեշտ են տալիս սիրելի դասվար Տաթևիկ Աբրահամյանին, ում հետ անցան գիտելիքների ամբարման մեծ ճանապարհ, որն ամփոփեցին հրաշալի հանդեսով՝ բացահայտելով Երևանի անցյալն ու ներկան:

Տոնական հրաշալի միջոցառման առթիվ չորրորդիցներին շնորհավորեց դպրոցի տնօրեն Նաիրա Տոդանյանը:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը խոստովանեց՝ տպավորված է բանիմաց, ու խելացի դպրոցականների ելույթից. ահա նրանք կյանքի նոր ու կարևոր փուլ են մտնում, որտեղ պիտի լինեն իրենց ինքնության, իմացության, պատմության և հիշողության կրողներ:

Սիլվա Ասրյան



Ճերմակ փուլիկների փնջերով ձևավորված ամպերի ներքո դեղին աշակերտական ավտոբուս, որի ուղևորները «գրոսաշրջիկներ» են, ավելի ստույգ՝ ՀՊՄՀ №57 հիմնական չորրորդ դասարանիցները: Զբոսանք Երևանում՝ հին ու նոր Երևանի պատմությամբ և Մասիսների ներքո:

Երևանին նվիրված երգերի գեղեցիկ կատարումների ներքո աշակերտները ծանոթանում են Կասկադին, հին Կոնդի թաղերին, որն ինքնին պատմամշակութային արժեք է, լաբիրինթոսս հիշեցնող նեղիկ փողոցներին, ուր տներն անհամաչափ աղյուսներից էին՝ հնաոճ, գունավոր, փայտե դռներով...

Գեթսեմանի մատուռի տեղում է վեր խոյացել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը. դպրոցականները պատմում են մեծերից լսածը, և իրենք էլ զարմանում...

Ճանապարհը տանում է Հաղթանակի կամրջի վրայով. այն միակն կամուրջն է եղել, որ կապել է Երևանը Արարատյան դաշտավայրին, իսկ ահա Երևանի ամենամեծ՝ Դանթարի շուկան...

Զբոսանքը շարունակվում է՝ ծանոթացում Երևանի բերդին ու նրա խորհրդավոր պատմությանը: Հետո «գրոսաշրջիկները» արվարձաններից տեղափոխվում են Երևան-

րոնի շենքն է և նրա հարակից փողոցները. Աստաֆյան՝ Աբովյան փողոցը, Բժշկական՝ Թումանյան փողոցը: Այս թաղամասում են բնակվել բնիկ երևանցիները: Դա ամենամաքուր թաղն էր: Իսկ այժմ, ցավոք...»,- աշակերտները շարունակում են պատմել հին ու նոր Երևանի մասին:

Աշակերտներից մեկն էլ ներկայացնում է մշակութային Երևանը, որն «աղմկում էր բոլոր նկարիչների գործերում. Թերլեմեզյան, Գյուրջյան, Սարյան, Բաշինջաղյան, որոնք նկարել են Երևանը տարբեր ժամանակներում»:

Ահա Թամանյանը՝ Երևանի հատա-

### Ճանաչողական այց



ՀՊՄՀ հենակետային (ավագ դպրոց) վարժարանի և այլ դպրոցներից տասնյակ աշակերտներ ճանաչողական այցով Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում էին:

Այցի նպատակն էր խորացնել աշակերտների մասնագիտական կողմնորոշումը, ընդլայնել նրանց պատմագիտական գիտելիքները, ծանոթացնել բուհական կրթական միջավայրին:

Սաներին ողջունեց ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու Էդգար Հովհաննիսյանը, ինչին հաջորդեց թեմատիկ դասախոսություն՝ «Հայոց ցեղասպանություն» թեմայով:

Պրոֆեսոր Սամվել Պողոսյանը ներկայացրեց նշված պատմափուլին առնչվող հիմնարար իրադարձությունները, դրանց պատճառահետևանքային կապերը, ժամանակակից պատմագիտական գնահատականները:

Մեկ այլ դասախոսությամբ էլ հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Արմինե Եփրիկյանը: «Ինչու տվորել պատմություն» խորագրով թեմայի շրջանակներում բանախոսը կարևորեց պատմության դերը ոչ միայն անցյալի ճանաչման, այլև քննադատական մտածողության, քաղաքացիական գիտակցության և ինքնության ձևավորման գործընթացում:

Այցը նպաստեց աշակերտների կրթական հետաքրքրությունների խթանմանը, համալսարան-դպրոց համագործակցության ամրապնդմանը՝ ստեղծելով նոր հարթակներ գիտակրթական փոխգործակցության համար:

Մարին Աղեկյան

### Նոր բեմադրություն. անդրադարձ չարենցյան պոեզիային

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դասիչնում «Ամբոխները խելագարված» բեմադրության առաջնախաղը ըստ Չարենցի համանուն պեմի ներկայացրեց բեմադրիչ, պրոֆեսոր Արդա Հովհաննիսյանը՝ «Ռեժիսուրա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ:

Ուսանողների արհեստավարժ խաղը համահունչ էր մեր գրականության մեծ ու հզոր բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի՝ իր ժամանակի իրականությունն ու ողբերգական անցքերը ներկայացնող ստեղծագործությանը: Այդ համատեքստում հայ ժողովրդի մշուշտ անցյալը կապվում էր ապագայի հանդեպ հույսի ու հավատի թելերով, մերթնդմերթ ոգեշնչում ու հուսադրում, մեկ էլ կրկին տանում դեպի ցավոտ անցյալ՝ դեպի մեր պատմության աննկարագրելի ողբերգական էջերը:

Ահա բեմի վրա «խելագարված ամբոխներն» են՝ սևազգեստ պատանիներ՝ կարմիրով գոտևորված: Խորհրդանիշները խոսում են, երգ-երաժշտությունը՝ հոգու խորքից բխող, «Հայր մեր»-ից մինչև «Կոռնկ, ուստի կուգաս» ու «Թամգարա» ընդմիջվում են կովի ու պայքարի տեսարաններով, քանզի՝ «դաշտերում իրիկնային մահն էր քրքջում համատարած»...

Կոնվուս ու պայքարը ուղեկցվում են «Քոչարի» և «Յար-խուշտա» պարերով, որոնք բարձրացնում են կովողների ըմբոստ ոգին, ու հանկարծ բեմ է ներխուժում մի ձայն՝ «ոչ» աղաղակում է ձայնը «Լուսամփոփի պես աղջկա» տեսքով սերը պիտի հաղթի մահին, լույսը՝ մութին:

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով... Ես ինչ անեմ, ինչ անեմ, որ չմեռնի իմ հոգին, Որ չմարի իմ հոգին ջո ակաթե աչքերում... Ես ինչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն, Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն... 6 աղջիկ և 4 տղա բեմից ներկաներին են փոխանցում չարենցյան հոգու բանաստեղծական տաղանայներն ու

ներքին բռնկումները, ու բառերը երգ են դառնում ուսանող դերասանների շուրթերին՝ առկախվում օդի մեջ:

Եվ ահա բնության հրաշքներից մեկը՝ անձրևը, բայց ամպրոպի որոտը հանկարծ խլանում է կովի ահեղ պայթյունների որոտից՝ հայրենիքը վառնազված է...

Բեմում նորից պայքարի՝ լույսի ու մութի բախում է, ուր «խելագարված ամբոխների» երթը շարունակվում է՝ հանուն լույսի, և առավոտի սպասում՝ հոգիներում հորիզոններ անձայրածիր...

Դեպի արևը սլացող ամբոխների երթը հզոր է՝ «եթե ուզեն արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...»:

Չարենցյան լավատեսությունը համեմվում է անուշ Հայաստանի արևահամ բարի հանդեպ սիրո ուղեծով, որ լուսավոր ապագայի, դեպի հավերժություն հայ ժողովրդի անվախճան երթի կանխագուշակումն է:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ուսանողներին ուղղված գովասանքի խոսքեր է հնչեցնում՝ նրանք իսկապես արհեստավարժ են ու տաղանդավոր: Ուսանողները լավագույնս ներկայացրին հայ ժողովրդի հավաքական կերպարի չարենցյան ըմբռնումը:

Ամբոխի վարիչ Արմեն Էլբակյանն ընդգծում է կատարված մեծ աշխատանքը, ապա հավելում՝ ապագա ռեժիսորները պետք է նաև դերեր կերպավորեն, որովհետև հետագայում աշխատելու են դերասանների հետ:

«Դժվար է պոզիան բեմադրությամբ ներկայացնել,-ասում է պրոֆեսոր Արդա Հովհաննիսյանը,-բայց ուսանողները հրաշալի ներկայացան բեմի վրա, հուզեցին հանդիսատեսին ու ներկաներին համակեցին սիրով ու վստահությամբ՝ Հայաստանի ապագայի տեսլականի հանդեպ»:

Չարենցյան պոեզիայի խորքային շերտերին անդրադարձը փայլուն էր և տպավորիչ բեմի վրա, ինչը վկայում է, որ մեր ուսանողներին խոստումնալից ապագա է սպասվում:

Սիլվա Ասրյան



Բանասիրական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հյուրն էր Հայաստանում Սերբիայի հյուպատոս, ՀԳՄ և Սերբիայի գրողների միության անդամ, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ սերբագետ Բարկեն Սիմոնյանը: Ապագա բանասերների հետ նա հաճախակի է հանդիպումներ ունենում՝ ներկայացնելով հայ-սերբական գրական-մշակութային կապերը: Հերթական հանդիպումը նվիրված էր հայ-սերբական թարգմանական գրականությանը:

Ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը ներկայացրեց օրվա բանախոսին՝ սերբագետ Բարկեն Սիմոնյանին, ապագա բանասերների համար կարևորեց թարգմանական գրականությունից օգտվելու անհրաժեշտությունը՝ նաև ընդգծելով, որ ամեն անգամ ուսանողների և դասախոսների առաջ սերբագետը հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ ու առաքելությամբ:

«Ավելի լավ միջազգային կապ, որ մենք իրականացնում ենք Բարկեն Սիմոնյանի միջոցով, հնարավոր չէ պատկերացնել», - ասում է Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անիտա Դոլուխանյանը, որը երեք անգամ եղել է Սերբիայում և նկատել է՝ Սերբիայում հայերին շատ

**«ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ԱՉԴԱԿԸ Է, ԱՌԱՆՑ ՈՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՂԱՐՁԻՆ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ»:**  
ԲԱՐԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

սլավոնական ազգերի մեջ նրանց համարում էին ամենահերոսականը:

Անիտա Դոլուխանյանն արժևորեց հյուրի կատարած աշխատանքը հայ-սերբական կապերի ամրապնդման համատեքստում, խոսեց նրա թարգմանական գործունեության մասին և վստահեցրեց՝ այնքան լավ է թարգմանել Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, որ թվում է այն սերբերեն է գրվել:

Բարկեն Սիմոնյանը նշեց՝ ինչու որոշեց թարգմանական գրականության մասին խոսել, որովհետև աշխարհի ժողովուրդներն իրար ճանաչում են թարգմանական գրականության միջոցով: Շուրջ հինգ տասնամյակ զբաղվում է թարգմանական գրականությամբ, վստահեցնում է՝ հայ-սերբական թարգմանական գրականությունը հնարավորություն է տվել երկու ազգերին իրար ավելի լավ ճանաչել:

Թարգմանությունների պսակն էր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը, որի համար Բարկեն Սիմոնյանը առաջաբան է գրել, իսկ Անիտա Դոլուխանյանը՝ պատ-

Բարկեն Սիմոնյանը հանգամանորեն ներկայացրեց հայերենից սերբերեն և սերբերենից հայերեն իր կատարած թարգմանությունները՝ պոեզիա, արձակ. Թումանյանի պատմվածքների թարգմանությունը, որ լայն արձագանք գտավ Սերբիայում, «Հայոց արև», որտեղ տեղ են գտել հայ մանկագիրների ստեղծագործությունները, իր առաջաբանով, անվանի բանաստեղծուհի Դեսանկա Մաքսիմովիչի՝ Արարատին նվիրված բանաստեղծությունը և էլի շատ թարգմանություններ, որոնք ավելի են ամրապնդել ճակատագրով իրար շատ նման երկու ժողովուրդների բարեկամությունը:

Ֆրանց Վերֆելը Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայոց պատմությունը, զրուցել եղեռն վերապրածների հետ և գրել «Մուսա լեռան 40 օրը» վեպը, բայց երկի քչերը գիտեն, որ այդ արժեքավոր գրքի համար առաջաբան է գրել Բարկեն Սիմոնյանը, և որ գիրքը լայն արձագանք է գտել Բելգրադում:

Սերբագետը շարունակում է ներկայացնել թարգմանական գրքերի շարքը՝ «Կոսովյան արև» 20-րդ դարի սերբական պոեզիայի անթոլոգիան առաջին անգամ թարգմանվել է և ներկայացվել հայ ընթերցողին, թարգմանել է սերբական պատմվածքների ժողովածուն, որը տպագրվել էր Մխիթարյան միաբանության տպագրատանը:

Հենրի Մորգենթաուի «Բոսնիայի գաղտնիքները» հուշերի գիրքը անգլերենից թարգմանվել է սերբերեն, որի առաջաբանը ևս գրել է Բարկեն Սիմոնյանը, նաև թարգմանել Վեսնա Պեշիչի «Կոչի ինձ գարուն» գիրքը:

Բարկեն Սիմոնյանը առաջիկայում պատրաստվում է հայերենից սերբերեն թարգմանել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին»:

«Թարգմանական գրականությունն այն ազդակն է, առանց որի աշխարհի գրականության անցուղարձին չեն կարող տեղյակ լինել վստահեցնում է օրվա բանախոսը և ներկաներին հիացնում Սերբիային և



Հայաստանին նվիրված իր հսկայածավալ գործունեությամբ:

-Այն, ինչ արել եմ ես, արել եմ հայ և սերբ ժողովուրդների համար, - ասում է սերբագետն ու հայրենասեր քաղաքացին, ապա սերբերենով արտասանում իր թարգմանությամբ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Նա խոստովանում է՝ բանաստեղծությունը դժվար էր թարգմանել, թարգմանությունն իրենից խլել է երեք տարի, բայց իրեն հաջողվել է հարազատ է մնացել Չարենցի յուրահատուկ հանգավորմանն ու բանաստեղծական չափին:

Բարկեն Սիմոնյանի հետ հանդիպումը հուզմունքի բազում պահեր պարզեցին դասախոսներին և ուսանողներին, որոնց համար այդ հանդիպումը գրականության հրաշալի դաս էր՝ նվիրված հայ-սերբական գրական կապերին:

Կարդացեք թարգմանական գրականություն, այն աշխարհի դուռը բացող ձեր ճանաչողության բանալին է՝ ուսանողներին հորդորեց ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը՝ հանդիպումն ամփոփելով Բայրոնի խոսքերով՝ նա հայերեն էր սովորում Մխիթարյան միաբանների մոտ և այն համարում աստվածների ու աղոթքի լեզու:

Սիլվա Ասրյան



լավ գիտեն և բացառիկ ջերմություն են դրսևորում հայերի նկատմամբ:

Պրոֆեսորն ընդգծեց՝ հայ-սերբական կապերը դարերի պատմություն ունեն, պատահական չէ, որ Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը կապված էին սերբ ժողովրդի հետ և

մական ակնարկ: Այդ թարգմանության միջոցով սերբերը ճանաչեցին Խորենացուն և Հայաստանը: Այն Սերբիայում հրատարակվել է Վեսլա Պեշիչի հրատարակչությունում: «Հայոց պատմություն» գրքի թարգմանության շնորհանդեսը Սերբիայում մեծ իրադարձություն էր:

**Բնության գրկում դասն աշխարհագրական և հայրենագիտական տոն է**

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում շարունակական են հանրապետության դպրոցների, տարբեր մասնագիտությունների տարիքային տարբեր խմբերի մանկավարժների հետ համագործակցային ծրագրերը և միջոցառումները:

Ապրիլի 11-ին կազմակերպվեց եռակողմ հետաքրքիր միջոցառում, որին մասնակցում էին ֆակուլտետի աշխարհագրություն-բնագիտություն մասնագիտության ուսանողները և մագիստրոսները՝ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

Վարդուհի Հովհաննիսյանի ղեկավարությամբ, Արմավիրի մարզի Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան N5 ավագ դպրոցի ուսանողական խորհրդին կից «Զբոսավարական ակումբի» սովորողները՝ իրենց աշխարհագրության ուսուցչուհու՝ Արմինե Թևադոսյանի նախաձեռնությամբ, Արգիի Ս.Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի և Ս.Վարդանյանի անվան վարժարանի պատմության և աշխարհագրության ուսուցչուհի Էլեն Հակոբյանը:

Երևան-Արմավիրի մարզ-Վայոց ձորի մարզ գրասաշրջային երթուղին մշակվել էր դպրոցի գրասավարական ակումբի սովորողների և մեր բուսի աշխարհագետների հետ համատեղ: Երթուղու հիմնական կանգառներում՝ Արենի քարանձավ, Նորավանք վանական համալիր, Գնիշիկ գետի հովիտ-Արենի գինու գործարան, կազմակերպվեց դաս բնության գրկում: Արվա գետի հովտում կատարվեցին եղանակային պայմանների դիտարկումներ: Աշխարհագետ ուսանողներն աշակերտներին ներկայացրին իրենց մասնագիտության առավելությունները՝ նպաստելով սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:

Արենի գինու գործարանում շրջայցի ընթացքում էքսկուրսիայի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան նաև հայկական գինեգործության ավանդույթներին: Օրն անցավ արդյունավետ, նոր բացահայտումների, ուրախ ու հաճելի ընկերային ծանոթությունների հարստացմամբ:

Ուրախալի է նշել, որ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի 2-րդ կուրսի մագիստրանտները զուգահեռաբար աշխատում են վերը նշված դպրոցներում և իրենց մանկավարժական գործունեությունը կարողանում են զուգորդել մագիստրոսական



թեզի հետազոտական աշխատանքին, մանկավարժամեթոդական և կրթական գործընթացի գործնական հետազոտական բաղադրիչը լրացնում են բուս-դպրոց համագործակցության շրջանակում:

Այսօրվա մարտահրավերների պայմաններում կարևոր է ունենալ պատասխանատու, գիտակից, գրագետ և նվիրված երիտասարդ մանկավարժ շրջանավարտներ:

**Վարդուհի Հովհաննիսյան**  
Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

**Կարեն Պուլուզյան**  
Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան N5 դպրոցի ուսուցչի օգնական, աշխարհագրության բաժնի 2-րդ կուրսի մագիստրանտ





ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ



Իմ սրտի Բանասիրականը

դունվեցի իմ սրտի Բանասիրական ֆակուլտետ՝ բացահայտելու հայերենի բազմադարյան գաղտնիքները, խորասուզվելու համաշխարհային ճանաչման արժանի հայ գրականության մեջ:

Ուրիշ զգացում ես ունենում, երբ ուսանող ես. ավելի պատասխանատու ես փորձում վերաբերվել ամեն ինչին, որն ուսումնասիրում ես, փաստերով ու գրքերով հիմնավորել ասածներդ: Մի պահ թվաց՝ ուզում էի նահանջել՝ մտածելով, թե սա չէ իմ տեղը, որ ամիսներ առաջ ընդամենը մի աշակերտ էի, իսկ հիմա ուսանող եմ, բանասեր պիտի դառնամ: Մտածում էի՝ չէի հաղթահարի: Վախենում էի իմ լեզվի առջև պարտվելուց ու մեծ պատասխանատվությունը չկրելուց: Բայց չէ որ կյանքում էլ կան դժվարություններ, որոնք պիտի հաղթահարես: Համալսարանն էլ կոփում է քեզ, ձևավորում: Ես շարունակում եմ բացահայտել ինձ, բացահայտել իմ հազարազանձ լեզուն, սիրահարվել գրաբարին

խենթանալու չափ: Երբ հոգով ուզում ես հասնել այն բարձունքին, որ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը գրաբարով կարդաս: Բացահայտում ես հին ու միջնադարյան գրականությունը, ավելի խորն ես հասկանում Նարեկացի, Ֆրիկ, Խորենացի, Եղիշե, Քուչակ: Արտագրում ես տետրումդ, անգիրներ սովորում գրաբարով, միջին հայերենով, ու փառավորվում է հոգիդ: Փափագում ես մի օր մտնել դպրոց ու դասախոսներիդ պես վարդեր ցանել աշակերտներիդ շուրջ, վեհացնես, թևեր տաս ճախրելու, երազելու, հայերենը սիրելու և զգալու:

Համալսարանը տվեց ինձ հնարավորություն ավելի լայն թևերս բացելու և այնպես ապրելու՝

Որ սուրբ հողս երբեք չզգա իմ ավելորդ ծանրությունը:

Դիանա Ղազարյան  
Բանասիրական ֆակուլտետի  
1-ին կուրս

Համալսարան ընդունվելը կյանքին մեծագույն երազանքն էր, որ թվում էր Ա հեռու, Ա մոտ: Երբ հաղթահարեցի ընդունելության քննությունները, ուրախությանս չափ ու սահման չկար: Վերջապես ես ըն-

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Մ ԱԶՔԵՐՈՎ



ՀՊՄՀ կամ բոլորիս հայտնի մանկավարժական մի դարբնոց, որտեղից դուրս եմ գալիս ապագա սերունդներ կերտողները: Մի դարբնոց, որ 100 տարուց ավելի սովորեցնում է սովորեցնել. սա է ՀՊՄՀ-ի իրական հմայքը և առաքելությունը:

Իսկ ի՞նչ տեսք ունի մեր՝ արդեն տուն դարձած համալսարանը ներսից՝ ուսանողի աչքերով:

Բարդ է լինի նկարագրել ՀՊՄՀ-ի ներքին հմայքը, քանզի այն բազմազան է, ինչ-որ տեղ՝ նաև խորհրդավոր: Վաղ առավոտից համալսարանը եռում է իր ուսանողության շարժից. չկա մի անկյուն կամ սենյակ, որտեղից չլսվեն տարբեր քննարկումներ, որտեղ չձնվեն նոր գաղափարներ. բեղմնավոր ու տարբերվող է այդ առումով համալսարանը, իսկ հարազատ ֆակուլտետում կամ, ինչպես համալսարանում են մեզ շատ հաճախ կոչում, պատմականում դասերը և ուսանողական ակտիվությունն էլ ավելի թեժ են. այստեղ են հանդիպում սերունդները և միասին ուղևորվում պատմության խորքերը՝ բացահայտելու պատմական դեմքերն ու դեպքերի մանրամասներն ու պատճառները:

Սա մի փոքր հատված է հարազատ ֆակուլտետի նկարագրությունից, որտեղից պետք է դուրս գան ապագա պատմաբանները՝ մարդիկ, որոնք միշտ հիշում են՝ ինչու և ինչպես, և որ ամենակարևորն է՝ երբ:

Համալսարանական յուրաքանչյուր օր հազեցած է ու տարբեր՝ մի օր բանավեճ, մի օր գիտաժողով, մի օր գիտական կարծիքների փոխանակում և այդ ամենի արդյունքում՝ հիանալի կրթություն և հնարավորություններ:

Որպես որդեն երկու տարվա ուսանող՝ վստահորեն և հպարտորեն կարող եմ ասել, որ ՀՊՄՀ-ն տալիս է հնարավորություն՝ բացահայտելու գիտությունը և ինքը քեզ գիտության մեջ: Տալիս է հնարավորություն՝ դրսևորվելու և գնահատվելու, մոտիվացվելու և առաջընթացի: ՀՊՄՀ-ն ընձեռում է այնպիսի հնարավորություններ, որոնք ամեն օր ես ականատես եմ լինում որպես պատմաբան: Կարևոր է նշել նաև պրակտիկան և նրա բուռն ընթացքը, որի շրջանակներում այցելում ենք տարբեր պատմամշակութային կոթողներ ու տեղում բացահայտում և վերապրում պատմական դեպքերը, հասկանում կոթողների ճարտարապետական և մշակութային արժեքը:

Եվ իհարկե, խոսելով ֆակուլտետի և համալսարանի մասին՝ դժվար է չանդրադառնալ մի կարևորագույն կառույցի՝ ՀՊՄՀ ուսանողական խորհրդին ու նրա մեծ թիմին, որի կարկառուն անդամներից մեկն էլ ես եմ: Ուսանողական խորհուրդն այն եզակի և տարբերվող կառույցներից մեկն է համալսարանում, որն ապահովում է ուսանողական ակտիվ կյանք ակտիվ դասերից հետո, երբ ուսանողը գերհագեցած է վերադառնում տուն՝ սպասելով, որ հաջորդ օրը կրկին գա համալսարան:

Ուսանողական խորհուրդը այն եզակի կառույցներից է, որտեղ ուսանողը կրթվում է, կրթվելուց զատ ձեռք է բերում տարբեր հմտություններ և փորձ. ձեռք է բերում այնպիսի փորձ, որ կյանքում և առօրյայում ամեն վայրկյան է կիրառելի. ուսանողին հնարավորություն է տրվում ստեղծագործել, զարգանալ ու ընթանալ միմիայն առաջ՝ դառնալով իրաշալի առաջնորդ: Վստահեցնում եմ՝ այդ ամենի արդյունքում ձևավորվում է ակտիվ, գիտակից և կրթված քաղաքացի:

ՀՊՄՀ՝ համալսարան, որտեղ չկան փակ դռներ ուսանողի համար, և բոլորը միշտ պատրաստ են օջակցել ուսանողին:

ՀՊՄՀ՝ համալսարան, որտեղ զբաղվում են գիտությամբ և կրթությամբ, անձի շարունակական կատարելագործմամբ:

Սա իմ բուհն էր, երբ ընդունվեցի, իսկ այժմ այն իմ երկրորդ տունն է, որի համար ես ինձ երջանիկ եմ զգում և չեմ ավստում իմ ընտրության համար:

Եվ որպես ամփոփում՝ ՀՊՄՀ-ն այն բուհն է, որտեղ չկան կաղապարներ:

Վահե Պողոսյան

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի 2-րդ կուրս

Ծաղիկներ անցյալի ցավից...



Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցը մեր օրերում միայն հիշողության օր չէ, այլ՝ պատասխանատվության կարևոր կոչ, հատկապես երիտասարդ սերնդի համար: Այն միավորում է վիշտն ու պարտքը՝ հիշելու գոհերին, փոխանցելու ճշմարտությունը և շարունակելու պայքարը պատմական արդարության համար:

Այս համատեքստում ՀՊՄՀ Ավագ դպրոց-հենակետային վարժարանում ձևավորվում և տարեց-տարի ամրապնդվում է մի յուրահատուկ նախաձեռնություն՝ «Ծաղիկներ անցյալի ցավից», որը կարծես արդեն դառնում է գեղեցիկ ավանդույթ: Վարժարանի սաների այցը Հայոց ցեղասպանության հուշահամալիր և թանգարան յուրաքանչյուր տարի ստանում է նոր խորություն ու իմաստ: Այցը միայն հարգանքի տուրք չէ. այն դառնում է ներքին ապրումների, ինքնաճանաչման և ազգային հիշողության վերարժևորման կարևոր փորձառություն: Աշակերտները ոչ միայն ծաղիկներ են խոնարհում անմար կրակի մոտ, այլև ներգրավվում են ծաղկաթերթիկների հավաքման և մշակման կամավորական աշխատանքներում՝ իրենց մասնակցությունը դարձնելով առավել գիտակցված և խորհրդանշական:

Նրանց խոսքերով՝ հուշահամալիրում գտնվելն ուղեկցվում է հուզմունքով, ցավով և պատասխանատվությամբ:



նատվության զգացումով: Այս ապրումները վկայում են, որ հիշողությունը կենդանի է, և նոր սերունդը պատրաստ է այն կրել ու փոխանցել:

«Ծաղիկներ անցյալի ցավից» նախաձեռնությունը ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական նշանակություն ունի. այն ձևավորում է արժեքներ, խորացնում պատմական գիտակցությունը և միավորում աշակերտներին ազգային կարևոր գաղափարի շուրջ: Տարեցտարի այս նախաձեռնությունը վերածվում է կայուն ավանդույթի՝ դառնալով վարժարանի կրթական կյանքի կարևոր բաղադրիչ: Մի ավանդույթ, որը հիշեցնում է՝ անցյալի ցավից ծնվում է ապագայի գիտակցված սերունդը:

Գրանցման վկայական՝ 01U00184 տրված է 26.03.2008 թ. Չասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը կարող էք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու  
Էջաղորդը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ